ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 27 2 0 2 4 № 1

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ETHNOGRAPHY
ЭТНОГРАФИЯ

ՀՏԴ՝ 911.3:316
DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

ՀՀ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Արտաշես Գ. Բոյաջյան
ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,Գյումրի, ՀՀ

Գայանե Ռ. Ավետիսյան
Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

«Պարտվում է նախ մշակույթը, ապա միայն երկիրը»:
Հրանտ Մաթևոսյան

Ամփոփում
Նախաբան. Ժամանակակից աշխարհում տիրապետող երկու հակադիր գաղափարախոսությունները՝ ազգայինը և գլոբալացումը, վճռորոշ ազդեցություն ունեն բնակչության բնական վերարտադրության և ազգային ինքնության պահպանման վրա:*Հոդվածի նպատակն* է վերլուծել ՀՀ ժողովրդագրական պատկերը, վեր հանել ազգային ինքնությունը խաթարող ժողովրդագրական հիմնախնդիրները և առաջարկել հնարավոր լուծումներ: Հաշվի առնելով մեր հանրապետությունում ընթացող հասարակական, տնտեսական և քաղաքական գործընթացները՝ սույն հոդվածում փորձել ենք ներկայացնել սոցիալ-ժողովրդագրական գործընթացները և դրանով պայմանավորված՝ ազգային ինքնության պահպանման խնդիրները:*Մեթոդներ և նյութեր.* Հետազոտության շրջանակներում համադրվել են պաշտոնական վիճակագրական տվյալների հավաքման, համեմատական, քանակական, որակական և վերլուծական մեթոդները: Ժողովրդագրական անվտանգությունը գնահատելիս օգտվել ենք բնակչության ծերացման առանձին սանդղակների մեծություններից [10, cc. 60-61]:*Վերլուծություն.*Սույն հոդվածում մեր խնդիրն է պարզել՝ ՀՀ ժողովրդագրական ներկայիս իրավիճա՞կն է փոխել ազգային ինքնությունը, թե՞ հակառակը՝ ազգային ինքնության փոփոխությունն է նպաստել ժողովրդագրական ճգնաժամի առաջացմանը: *Արդյունքներ.* Աշխատանքում ներկայաց-

ված են ՀՀ ժողովրդագրական պատկերում առկա մի շարք լրջագույն խնդիրներ, որոնք շուտափույթ լուծում չստանալու պարագայում, ոչ հեռու ապագայում կհանգեցնեն նոր՝ «մահացող ազգ» եզրույթի շրջանառությանը: Ուստի անհրաժեշտ է լրջորեն մոտենալ առաջին հայացքից զուտ անձնական հարթության վրա գտնվող հիմնախնդիրներին և դրանց տալ պետական լուծում, հակառակ դեպքում կդառնան ազգային անվտանգության տեսանկյունից անլուծելի հիմնախնդիրներ: *Հեղինակների ներդրումը*. Հոդվածում առաջին հեղինակի ներդրումը տեսական մոտեցումների և բովանդակային նյութի ձևակերպումն է, իսկ երկրորդ հեղինակինը՝ քանակական հետազոտության տվյալների ամփոփումը և ներկայացումը:

Բանալի բառեր՝ *ժողովրդագրական հիմնախնդիր, ծնելիություն, ամուսնությունների միջին տարիք, բնակչության աճ, տեսակարար կշիռ, ինքնություն, ազգ, գլոբալացում, մուլտիկուլտուրալիզմ:*

Ինչպես հղել՝ Բոյաջյան Ա., Ավետիսյան Գ. *ՀՀ սոցիալ-ժողովրդագրական խնդիրները և ազգային ինքնապահպանության հարցերը* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի: 2024: Հ. 1 (27): 207-217 էջեր:

DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

SOCIAL-DEMOGRAPHIC PROBLEMS AND NATIONAL SELF-DEFENSE ISSUES IN RA

Artashes G. Boyajyan

Shirak Center for Armenological Studes of NAS RA, Gyumri, RA

Gayane R. Avetisyan

After M.Nalbandyan State University of Shirak, Gyumri, RA

Abstract

Introduction: The two opposing ideologies prevailing in the modern world, nationalism and globalization, have a decisive influence on the natural reproduction of the population and the preservation of national identity.*Analysis*: Within the framework of the research, studies were mainly carried out from demographic, social geographical, ethnological, sociological, historical and economic perspectives, and the issues of national identity from ethnological, philosophical and cultural perspectives. *Methods and materials:* Within the framework of the research, official statistical data collection, comparative, quantitative, qualitative and analytical methods were combined. When assessing demographic security, we used the magnitudes of individual population aging scales *Results:* The work presents a number of serious problems in the demographic picture of RA, which, if not solved soon, will contribute to the circulation of the new term "dying nation" in the not-too-distant future. Therefore, it is necessary to seriously approach the problems that are purely personal at first sight and give it a state solution, otherwise it will become an insoluble problem from the point of view of national security. *Authors contribution:* The first author's contribution to the article is the formulation of theoretical approaches and substantive material, and the second author's contribution is the summary and presentation of quantitative research data.

Key words: *demographic problem, birth rate, average age of marriage, population growth, specific gravity, identity, nation, globalization, multiculturalism, morality.*

How to cite: Boyajyan A., Avetisyan G. *Socio-Geographical Problems of RA and Issues of National Self-Preservation* // "Scientific works" of the National Academy of Sciences of the RA, Gyumri. 2024. V. 1 (27). 207-217 pp. DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ РА И ВОПРОСЫ НАЦИОНАЛЬНОГО САМОСОХРАНЕНИЯ

Арташес Г. Бояджян

Ширакский центр арменоведческих исследований НАН, Гюмри, РА

Гаяне Р. Аветисян

Ширакский государственный университет им. М. Налбандяна, Гюмри, РА

Аннотация

Введение: Две противоположные идеологии, преобладающие в современном мире, национализм и глобализация, оказывают определяющее влияние на естественное воспроизводство населения и сохранение национальной идентичности. *Анализ:* В рамках темы исследования проводились в основном с демографической, социально-географической, этнологической, социологической, исторической и экономической точек зрения, а вопросы национальной идентичности - с этнологической, философской и культурологической точек зрения. *Методы и материалы:* В рамках исследования были объединены сбор официальных статистических данных, сравнительные, количественные, качественные и аналитические методы. При оценке демографической безопасности использовались величины отдельных шкал старения населения. *Результаты:* В работе представлен ряд серьезных проблем демографической картины РА, которые, если не будут решены в ближайшее время, будут способствовать распространению нового термина «вымирающая нация» в не столь отдаленном будущем. Поэтому необходимо серьезно подойти к проблемам, которые на первый взгляд являются сугубо личными, и дать им государственное решение, иначе это станет неразрешимой проблемой с точки зрения национальной безопасности. *Вклад авторови:* Вклад первого автора в статью заключается в формулировке теоретических подходов и содержательного материала, вклад второго автора – в обобщении и представлении количественных данных исследования.

Ключевые слова: *демографическая проблема, рождаемость, средний возраст вступления в брак, прирост населения, удельный вес, идентичность, нация, глобализация, мультикультурализм, мораль.*

Как цитировать: Бояджян А., Аветисян Г. *Социально-демографические проблемы РА и вопросы национального самосохранения* // «Научные труды» ШЦАИ НАН РА, Гюмри 2024. Т. 1(27). 207-217 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.1-207

ՆԱԽԱԲԱՆ. Բնակչության թվաքանակի և կազմի փոփոխություններն ուղղակիորեն ազդում են հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր,մշակութային և այլն: ԽՍՀՄ-ի լուծարումից հետո մեր հասարակությունը, ազատվելով խորհրդային կոմունիստական մշակույթի և արժեհամակարգի ազդեցությունից, անկախության տարիներին ընտրեց արևմտյան գլոբալիստների արժեհամակարգը, ինչը հակադիր էր ոչ միայն կոմունիստական, այլև ազգային

գաղափարախոսությանը [9, էջ 11]: Հայտնի է, որ արևմտյան գլոբալիստական արժեհամակարգ դավանող պետություններին բնորոշ է ծնելիության ցածր մակարդակը և ժողովրդագրական կայունությունը բացառապես զարգացող երկրներից բնակչության ներգաղթի հաշվին ապահովելը: Մեր հանրապետությունում բնակչության ծնելիության մակարդակի անկմանը զուգընթաց՝ 1991-2000 թթ. արձանագրվել է բնակչության զանգվածային արտագաղթ՝ հիմնականում ՌԴ, ԱՄՆ և ԵՄ անդամ երկրներ:

ՀՀ սոցիալ-ժողովրդագրական գործընթացները և ազգային ինքնապահպանության հարցերը:

ՀՀ ժամանակակից ժողովրդագրական իրականության մեջ ձևավորվել են էկզիստենցիալ մարտահրավերներ, որոնք լուրջ խնդիրներ են հարուցել ազգապահպանության խնդրում: Հայաստանը ազգային միատարր երկիր է (ըստ ՀՀ 2022 թ. մարդահամարի նախնական տվյալների՝ մշտական բնակչության 98,1%-ը հայեր են [11]), և առաջին հայացքից թվում է, որ ՀՀ-ում հայերն ազգային ինքնապահպանության խնդիր չունեն: Սակայն, մասնավորապես, 2020թ. արցախյան պատերազմի արդյունքները, հարևան պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի թշնամանքը և ագրեսիվ պահվածքը մեր երկրի նկատմամբ, երկու գերտերությունների՝ ԱՄՆ-ի և ՌԴ-ի շահերի բախման գոտում գտնվելը, նաև ժողովրդագրական աղետալի վիճակը հայերին ազգային ինքնության կորստի և գոյատևման լուրջ հիմնախնդրի առջև են կանգնեցրել:

Հոդվածի գիտական նորույթն այն է, որ փորձել ենք հիմնավորել, թե հանրապետության ժողովրդագրական արդի վիճակն ինչպիսի վտանգ է ներկայացնում հայերի ազգային ինքնության պահպանման առումով: Ազգերի վերջնական կայացումը տեղի է ունենում պետություններում և պետությունների միջոցով, և նրանք իրենց ինքնությունը պահպանում են ազգային համակարգերի գոյությամբ [9, էջ 13]: Ընդգծենք՝ ազգերի ինքնության պահպանման գլխավոր միջոցը վերարտադրվելն է: Ինչքան բարձր է վերարտադրության ցուցանիշը, այնքան ազգային ինքնության պահպանության հնարավորությունը մեծ է, և հակառակը: Ի վերջո, ազգային և ժողովրդագրական անվտանգություն հասկացությունները սահմանվում են որպես պետության և բնակչության վերարտադրության իրական և հավանական վտանգներից պաշտպանություն: ՀՀ ներկայիս սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակը և ազգային ինքնության պահպանումը հրատապ լուծում են պահանջում, որպեսզի դիմակայենք նոր ու գլոբալ մարտահրավերներին: ՀՀ ժողովրդագրական զարգացման հեռանկարները և ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրների վերհանման, համակողմանի հետազոտության և դրանց լուծման ուղիների նախանշման անհրաժեշտությունը պայմանավորում են հետազոտության թեմայի *արդիականությունը և հրատապությունը*:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. Բնակչության բացարձակ թվի փոփոխության շարժընթացին օբյեկտիվ գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել ելակետային տարվա ընտրություն. այդպիսին համարել 1989 թվակա՞նը, ԽՍՀՄ-ի վերջին մարդահամարի արդյունքները, երբ մարդահամարն էքստրեմալ պայմաններում էր անցնում 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի պատճառով, երբ մարդկային զոհերի թիվը գերազանցել էր քսանհինգ հազարը, թե՞ ելակետային համարել մեկ

այլ տարի: Հիմնվելով ՀՀ ԱՎԿ պաշտոնական վիճակագրության հրատարակած նյութերի վրա՝ նպատակահարմար է բնակչության թվի ելակետային տարի համարել 1990թ.-ը [12]: Այդ տարում ՀՀ բնակչության թիվը կազմել է 3 514.9 հազ.մարդ[12]: Այսինքն՝ 1989թ. մարդահամարի արդյունքի ցուցանիշի (3304.8հազ. մարդ) համեմատությամբ այն ավելացել է 210,1 հազարով կամ 6,5 %-ով: Այսպիսով, 1992-1994 թթ. ՀՀ բնակչության բացարձակ թիվը նվազել է 373.0 հազ. մարդով կամ 11,6 %-ով: Մեր հանրապետության բնակչության թվի շեշտակի անկումը սկսվեց 1992թ.-ից, ինչն էլ հանգեցրեց ժողովրդագրական ծերացման: Այժմ ՀՀ-ն դասվում է ժողովրդագրական ծերացման շատ բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին[4, էջ 100]: Աղյուսակ 1-ից երևում է, որ 1989թ. 65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության թվաքանակում կազմել է 5.2%, իսկ 2022 թ.-ին՝ 13.0%[1]: Այսինքն՝ 33 տարիների ընթացքում ժողովրդագրական ծերացման մակարդակն աճել է 2.5 անգամ: Հարկ ենք համարում հիշատակել, որ ներկայումս 65-ից բարձր տարիքային խմբում 1945-1955-ականների սերունդն է, երբ ծնելիության գործակիցն ուներ բավականին բարձր ցուցանիշ՝ շուրջ 38% (այսպես կոչված, հետպատերազմյան «բեբի բում»), ընդ որում՝ այդ խնդիրը դեռևս մոտակա 10 տարում ավելի կսրվի, երբ 65-ից բարձր տարիքային խումբ կմտնեն 1970-ականների ծնվածները, որտեղ ծնելիության գործակիցը միջինը կազմել է 24%: Ճիշտ է, այս թիվը զիջում է 1940-1950-ականների տվյալներին, սակայն ծնվածների բացարձակ թվաքանակով գերազանցում է: Ներկայացված ժամանակահատվածում մեր հանրապետությունում գրանցվել են կենսաթոշակային տարիքի բնակչության տեսակարար համաթվի աճ և մինչաշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշռի անկում: Հաշվի առնելով բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխության զարգացման միտումները՝ կարելի է արձանագրել, որ մոտ ապագայում կկանգնենք ոչ միայն ժողովրդագրական, այլ նաև աշխատաշուկայում լուրջ խնդիրների առջև: Կենսաթոշակառուների թվի աճին զուգահեռ՝ նվազում է աշխատանքային տարիք մուտք գործողների թիվը:

Բնակչության թվի շարժընթացի ներկա միտումները պահպանվելու դեպքում ՀՀ բնակչության թվաքանակը, ըստ ՄԱԿ-ի անդամ երկրների ժողովրդագրական հիմնական ցուցանիշների, 2050թ. կլինի 2.8 մլն, իսկ դարեվերջին՝ 2.0 մլն մարդ [5, էջ 33]: Ներկայացված ցուցանիշների վերլուծումը հարց է ծնում՝ ինչպիսին կլինի հայերի տեսակարար համաթիվը բնակչության ընդհանուր թվաքանակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր հանրապետությունը գտնվում է աշխարհաքաղաքական անկայուն տարածաշրջանում: Կանխատեսելի է, որ Իսրայել-Իրան, ԱՄՆ-Իրան, Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա պատերազմական գործողությունների ժամանակ արմատական փոփոխությունների կարող է ենթարկվել մեր հանրապետության էթնոժողովրդագրական իրավիճակը: Դրա ապացույցն է Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետության 120 հազարից ավելի հայերի բռնի տեղահա-

[1] Ժողովրդագրական ծերացման գնահատման համար օգտվել ենք Ժ. Գարնեյի և ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակից (տե՛ս նաև Մանուկյան Մ. և այլք, *ՀՀ բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում*,// Բանբեր ՀՊՏՀ, հ. 4, Եր. 2021, էջ 100):

նումը դեպի Հայաստանի Հանրապետություն: Մեր կողմից իրականացված հետազոտություններից պարզվել է, որ այժմ արցախահայության մի հատված արտագաղթում է հիմնականում ՌԴ, իսկ ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ ՌԴ-ի և Հնդկաստանի քաղաքացիների ժամանակավոր կացությունը ՀՀ-ում առայժմ չի ազդում մշտական, սակայն ազդում է առկա բնակչության թվաքանակի վրա [1, թերթ 15]:

Աղյուսակ 1

ՀՀ ժողովրդագրական պատկերը թվերով
(1989-2022 թթ.)

	1989թ.	1995թ.	2001թ.	2006թ.	2011թ.	2016թ.	2021թ.	2022թ.
Բնակչության թիվը / հազ. մարդ/	3304.8	3766.4	3212.9	3222.9	3 021.4	2 986.1	2 963.3	2 961.4
Տղամարդ %	49.5	48.5	48.6	48.3	48.5	47.7	47,2	47.1
Կին %	50.5	51.6	51.4	51.7	51.5	52.3	52.8	52.9
Ծնելիությունը՝ %	21.6	13.0	8.4	11.7	13.3	13.5	12.4	12.3
Մահացությունը՝%	6.0	6.6	6.3	8.5	8.6	9.4	11.6	10.4
Բնական աճը՝ %	15.6	6.4	2.1	3.2	4.7	4.1	0.8	1.0
65-ից բարձր տարիքի անձանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության թվաքանակում, %	5.2	9.5	10.0	10.9	12.0	13.2	12.6	13.0
Մինչև 14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը ողջ բնակչության մեջ՝ %	30.4	25,4	23.4	19.7	20.1	21.0	20.2	20.1
Կյանքի միջին տևողությունը տարով	72	72.5	73.5	73.3	74.2	75.0	72.4	75.1
Ամուսնություն	27257	15911	12302	16887	19 706	16 294	17 165	16795
Ամուսնալուծություն	4134	2741	1776	2797	3 188	3 648	4 434	4525
Բնակչության տարեկան միջին աճի/նվազման տեմպերը՝ %		+2.4	-2.5	+0.1	-1.3	-0.2	-0.1	-0.1

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ-ի տվյալները:

Ժողովրդագրական անվտանգությունը ազգային ինքնության պահպանման և պետական անվտանգության ապահովման կարևորագույն տարրն է: Այժմ ՀՀ ժողովրդագրական գլխավոր վտանգներն են ծնելիության շեշտակի անկումը, մահացության գործակցի աճը, ամուսնությունների թվի նվազումը, ամուսնական միջին տարիքի մակարդակի աճը, ամուսնական տարիքի տղաների, մասնավորապես՝ 1990-2000-ական թթ. ծնվածների թվի շեշտակի աճը: Մեր կողմից իրականացված էթնոսոցիալական հետազոտություններով պարզել ենք, որ երիտասարդ աշխատող ամուսնական զույգը, որի եկամուտը ցածր է հանրապետական միջին ցուցանիշից և բնակարանով ապահովված չէ, ցանկություն չունի շատ երեխաներ ունենալու[1, թերթ 12]:

ՀՀ կառավարության կողմից ծնելիության խթանման ուղղությամբ իրականացվող միջոցառումները[13] չեն ապահովում սպասված արդյունքը, ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակել ծնելիության խթանման նոր մոդել: Այդ առումով, մենք առաջարկում ենք հիմնել «Ծնելիության խթանման համահայկական հիմնադրամ», որտեղ իրենց ծանրակշիռ դերը կարող են ունենալ ՀՀ մեծահարուստները և սփյուռքի հայությունը, իսկ հավաքված գումարից, որոշակի սկզբունք մշակելով, բաշխել յուրաքանչյուր նորածնին մինչև նրա չափահաս դառնալը:

Բնակչության ծնելիության անկումը և զանգվածային արտագաղթը հանգեցրին բնակչության ծերացմանը, ինչը ժողովրդագրական անվտանգության հիմնախնդիրներից մեկն է: Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից երևում է, որ 2000-2009 թթ. ծնվածների գումարային թիվը, համեմատած 1990-1999 թթ., պակասել է 220.5 հազարով կամ 39.7%-ով, իսկ 2010-2019 թթ.՝ 70.2 հազարով կամ 20.9%-ով: Վերջին տասներեք տարիներին ծնվածների թվի աճը պայմանավորված է հիմնականում ամուսնական տարիք մուտք գործողների (1990-1999 թթ. ծնունդներ) թվի աճով:

ՀՀ-ում 1990-2023թթ. պտղաբերության ցուցանիշը նվազել է 1.4 գործակցով և 2002թ. կազմել է 1.2, իսկ 2020թ.-ին՝ 1.6[3, էջ 5]: Կարծում ենք՝ 2002-2020թթ. պտղաբերության գործակցի աճը պայմանավորված է 2010-ական թվականների ամուսնությունների և ծնվածների թվի աճով: Այժմ աշխարհի շուրջ հարյուր պետություններում մեկ կնոջ հաշվով միջին պտղաբերության մակարդակը չի հասնում 2.0-ի, իսկ ՀՀ-ում՝ 1.5 [8, էջ 267]: Պտղաբերության այսպիսի ցածր մակարդակի դեպքում երկարամյա հեռանկարում հնարավոր չէ ապահովել բնակչության պարզ վերարտադրությունը: 2020թ. ՀՀ բնակչության բնական աճի նվազման համայնապատկերում ուշագրավ է հարևան պետությունների համեմատությունը, ընդ որում՝ Իրանում տարեկան բնական աճը կազմել է 616.6 հազ., Թուրքիայում՝ 608,9 հազ. և Ադրբեջանում՝ 50.9 հազ. մարդ[5, էջ 79], իսկ ՀՀ-ում վերջին 33 տարիների ընթացքում կազմել է շուրջ 539,9 հազ. մարդ (տե՛ս. աղ. 2): Հիշատակենք, որ մեր հանրապետությունում պտղաբերության գործակցի ցուցանիշի անկումը պայմանավորված է նաև մեդիանական (ամուսնական) տարիքի աճով: Այսպես, 1995թ. այն եղել է 22 տարի, իսկ այժմ՝ 36.1 է [6, էջ 106]: Կարելի է արձանագրել, որ մեր հանրապետության բնակչության կեսն արդեն անկախության սերունդն է, որն իր ազգային ինքնությանը բնորոշ հատկանիշներով տարբերվում են խորհրդային սերնդից: Այդ առումով հայտնի է, որ երեխա ունենալու ցանկությունը նվազում է մարդակենտրոն հասարակության պայմաններում[5, էջ 12], ինչը բնորոշ է ժամանակակից ՀՀ հասարակությանը:

Ամուսնությունը ժողովրդագրության մեջ, ավանդական ընկալումների համատեքստում դիտվում է վերարտադրողական վարքը պայմանավորող և հաջորդող սերնդի վերարտադրությունն ապահովող պայման: Հետևաբար ազգային արժեքային ընկալումներում ընտանիքի ինստիտուտը չափազանց կարևորագույն նշանակություն ունի: ՀՀ-ում 2000-2009թթ. ամուսնությունների թվի նվազումը և 2010-2019թթ. ամուսնալուծությունների թվի աճը (տե՛ս աղ. 2) իր ազդեցությունն ունեցավ ծնելիության անկման վրա: Ընդ որում ամուսնությունների թվի նվազումը պայմանավորված է եղել աշխա-

տունակ տարիքի, այդ թվում՝ ամուսնական տարիքի տղամարդկանց արտագաղթով: ՀՀ-ում 2002-2007թթ. միգրանտների 94%-ը (տարեկան միջին աշխատանքային միգրանտների թիվը կազմել է 162-189 հազար մարդ) բաժին է ընկնում աշխատանքային միգրանտներին, ի տարբերություն 1990-1999թթ., որտեղ արտագաղթողների ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել ակտիվ աշխատունակ տարիքի (25-49 տարեկան) բնակչությանը, իսկ արտագաղթողների թիվը գերազանցել է 800 հազարը[7, էջեր 10-11]: Ըստ այդ հետազոտության արդյունքների՝ աշխատանքային միգրանտների 90%-ը, իսկ մշտական միգրանտների 51%-ը [7, էջ 15] տղամարդիկ են:

Աղյուսակ 2

ՀՀ բնակչության ծնելիության, մահացության և բնական աճի թվի շարժընթացը 1990-2023թթ.

Տարեթիվ	Ծնվածների գումարային թիվը	Մահացածների գումարային թիվը	Բնական աճի գումարային թիվը	Ամուսնական տարիք մուտք գործելու տարեթվերը	Ամուսնությունների գումարային թիվը	Ամուսնալուծությունների գումարային թիվը
1990-1999 թթ.	555428	244591	310837	2015-2025 թթ.	184289	28455
2000-2009 թթ.	334925	261418	73507	2025-2035 թթ.	158302	22644
2010-2019 թթ.	405136	273591	131545	2035-2045 թթ.	173176	36705
2020-2023 թթ.	145616	121555	24061	2045-2050 թթ.	62346	16639
ընդամենը	1441105	901155	539950		578113	104443

Աղյուսակը կազմելիս օգտագործվել են ՀՀ ԱՎԿ հրապարակված տվյալները:

Ամուսնությունների թվի նվազման, ամուսնալուծությունների թվի աճի, բնակչության զանգվածային արտագաղթի պատճառով մեր հանրապետության ազգային ինքնության պահպանման հարցում լուրջ խնդիրներ են առաջացել: Կարծում ենք՝ այդ գործընթացին նպաստել է նաև գլոբալացումը, որի գլխավոր նպատակներից մեկն է ազգային ինքնության արդիականացումը, այսինքն՝ ավանդականից անցում կատարել քաղաքականի կամ արդիականի, որի ձևավորման արդյունքում մոռացության է մատնվում տվյալ ազգի միասնական պատմությունը[2, էջ 92-93]:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

- Մեր ուսումնասիրությունից պարզվում է, որ 1990-ական թվականներին ՀՀ-ում հայերի ազգային ինքնության արդիականացման գործընթացը հանգեցրեց բնակչության ծնելիության անկմանը, մահացության աճին, զանգվածային արտագաղթին և բնակչության ծերացմանը: Այժմ մեր հանրապետությունում ժողովրդագրական աղետալի վիճակ է:
- Հայաստանի Հանրապետությունում 65-ից բարձր տարիքային խմբի տեսակարար կշիռը բնակչության մեջ ոչ միայն բարձր է համաշխարհային միջին ցուցանիշից, այլև ունի շարունակական աճի միտում՝ ավելացնելով պետական բյուջեից կենսաթոշակառուներին հատկացվող գումարները:
- 1989 թ. համեմատ 2023 թ. ծնելիության ընդհանուր գործակիցը նվազել է երկու անգամ:

- Մինչև 15 տարեկան տարիքային խմբի բնակչության տեսակարար կշիռը նվազում է, ինչը մոտակա տասը տարիներին կհանգեցնի աշխատաշուկայի լարվածության խորացմանը, իսկ աշխատուժի պահանջարկի մեծացումը կբավարարվի արտասահմանյան, մասնավորապես՝ Հնդկաստանից և Իրանից ներգաղթած երիտասարդ բնակչության հաշվին, ինչն էլ վերջին երեք տարիներին աճման միտումներ ունի: Այդ միտումը շարունակվելու դեպքում միջնաժամկետ հեռանկարում մեր հանրապետության ազգային կազմում կգրանցվի որոշակի փոփոխություն՝ հայերի տեսակարար համաթվի անկում:
- Ներկայացվող ժամանակահատվածում մեր հանրապետությունում ամուսնական տարիքի մակարդակի աճ է գրանցվել՝ 22 -ից դարձել է 28, ինչն իր գործուն ազդեցությունն է ունեցել ծնելիության անկման վրա: Հիշատակենք, որ ուշ ամուսնության դրդապատճառներից է համարվում նաև դպրոցներում անցումը 12-ամյա և բուհերում 6-ամյա կրթությանը:
- ՀՀ այժմ ամենահրատապ հիմնախնդիրներից է բնական պարզ վերարտադրությունը, միգրացիայի բացասական մնացորդը և ժողովրդագրական ծերացման բարձր մակարդակը, ինչը սպառնում է ազգային ինքնության պահպանությանը, ավելի կոնկրետ՝ հայ ազգի գոյատևմանը:
- Փաստորեն, ժողովրդագրական գործընթացների արդի միտումները ՀՀ ազգային անվտանգության և ինքնության պահպանման գլխավոր և իրական մարտահրավերների շարքում են:
- Ամուսնությունների թվի նվազման, ամուսնալուծությունների թվի աճի, բնակչության զանգվածային արտագաղթի պայմաններում մեր հանրապետության ազգային ինքնության պահպանման հարցը գլխավոր հիմնախնդիրներից մեկն է դարձել:

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Բոյաջյան Ա.** *Շիրակի մարզի ամուսնությունները և ամուսնալուծությունները*: Դաշտային ազգագրական նյութեր (այսուհետև՝ ԴԱՆ): Գյումրի: Տետր 1: 2024: 48 թերթ:
2. **Դեմիրճյան Մ.** *Ազգային ինքնությունը ժամանակակից արժեքային փոխարկումների համատեքստում* // ՎԷՄ համահայկական հանդես Ժ(ԺԶ) տարի: Թիվ 1(61) հունվար մարտ: հրատ. ՎԷՄ հանդես, Եր. 2018: 91-106 էջեր:
3. *Ժողովրդագրական հիմնախնդիրները պատերազմի և համավարակի հետևանքների գնահատման համատեքստում*: Ամբերդ մատենաշար: Երևան: «Տնտեսագետ» հրատ.: 2022: 217 էջ:
4. *ՀՀ բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում* // Բանբեր ՀՊՏՀ: Երևան: Հ. 4, 2021: 95-115 էջեր:
5. **Մալխասյան Մ. Խաչիկյան Ա. Մալխասյան Մ.** *Ժողովրդագրական անցման արդի փուլը ՀՀ-ում:* Երևան: ԵՀ հրատ: 2023: 160 էջ:
6. **Մանուկյան Մ. և այլք**, *ՀՀ բնակչության ծերացման հիմնախնդիրները ժողովրդագրական գործընթացների փոփոխության համատեքստում* // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևան: Հ. 4: 2021: 95-112 էջեր:
7. **Մինասյան Ա. և այլք,** *2002-2008թթ. Հայաստան վերադարձող միգրանտների հետազոտություն*: Երևան: «Ասողիկ» հրատ: 2008: 80 էջ:
8. **Մարգսյան Լ. Հարությունյան Հ.** *Ժողովրդագրական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում* // «Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները ՀՀ-ում»: ՀՀ ԳԱԱ հրատ.: Հ. 2: 2018: 267-279 էջեր:

9. **Տեր-Աբրահամյան Հ**. *Ազգային անկախությունը նպատակ և միջոց*: //21-րդ դար: «Նորավանք» գիտակրթական հանդես: Հ.6 (70): 2016: 10-25 էջեր:
10. **Россет Э**. *Процесс старения населения*. изд. Статистика населения с основами демографии. М. 1990. 132 стр.
11. *ՀՀ մշտական բնակչության ազգային կազմը, լեզուներին տիրապետելը և կրոնական դավանանքը*: Երևան: 2022թ. ՀՀ մարդահամարի նախնական արդյունքներ, https://armstat.am/am/?nid=81&id=2623: (դիտվել է՝ 21.01. 2024):
12. *ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները 1990-2018թթ.*: ՀՀ ԱՎԿ նյութեր: https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf: (դիտվել է՝ 27.01. 2024):
13. *Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարություն*: https://www.e-draft.am › files›project_doc. (դիտվել՝ 12.02.2024):

R e f e r e n c e s

1. **Boyajyan A.** Marriages and Divorces of Shirak Marz [*Shiraki marzi amusnut'yunnery yev amusnalutsut'yunnery*]. Ethnographic Field Materials. Gyumri: notebook 1. 2024. 48 sheets. (In Armenian)
2. **Demirchyan M.** National identity in the context of modern value conversions[*Azgayin ink'nut'yuny zhamanakakits' arzhek'ayin p'vokharkumneri hamatek'stum*] // VEM national journal 10(16) year, number 1(61) January March, ed. Journal of the Ministry of Energy, Science and Technology, Yer. 2018. 91-106 pp.. (In Armenian).
3. Demographic Issues in the Context of War and Pandemic Consequences Assessment. [*Zhoghovrdagrakan himnakhndirnery paterazmi yev hamavaraki hetevank'neri gnahatman hamatek'stum*]. Yerevan. // Amberd series, ed. "Economist". 2022 217p. (In Armenian)
4. Problems of aging of the RA population in the context of changes in demographic processes, [*HH bnakch'ut'yan tserats'man himnakhndirnery zhoghovrdagrakan gortsynt'ats'neri p'vop'vokhut'yan hamatek'stum*,] // Banber ASTU. Yerevan: H. 4, 2021. 95-115 pp.. (In Armenian)
5. **Malkhasyan M. Khachikyan A., Malkhasyan M.** The current stage of the demographic transition in Armenia. [*Zhoghovrdagrakan ants'man ardi puly HH-um*] Yerevan: YU newspaper. 2023 160p. (In Armenian)
6. **Manukyan M.** and others. Problems of the aging of the RA population in the context of changes in demographic processes. [*HH bnakch'ut'yan tserats'man himnakhndirnery zhoghovrdagrakan gortsynt'ats' neri p'vop'vokhut'yan hamatek'stum*]. // Banber of the State University of Economics of Armenia, Yerevan. H. 4: 2021 95-112 pp.. (In Armenian)
7. **Minasyan A**. and others. 2002-2008. Survey of migrants returning to Armenia. [*2002-2008t't'. Hayastan veradardzogh migrantneri hetazotut'yun*].Yerevan: "Asoghik" newspaper. 2008 80 p.. (In Armenian)
8. **Sargsyan L., Harutyunyan H**. Current Demographic Problems in RA. [*Zhoghovrdagrakan ardi himnakhndirnery HH-um*]. // "Socio-Economic Current Problems in RA", RA NAS Ed., H. 2: 2018. 267-279 pp.. (In Armenian)
9. **Ter-Abrahamyan H**. National independence is a goal and a means. [*Azgayin ankakhut'yuny npatak yev mijots'*]. // 21st century. "Noravank" scientific and educational journal. H.6 (70). 2016. 10-25 pp.. (In Armenian)
10. **Rosset E.** The process of population aging. [*Protsess stareniya naseleniya*] ed. Population statistics with basic demographics. M. 1990. 132 p. (In Russian)
11. The national composition of the permanent population of RA, mastery of languages and religious belief. [*HH mshtakan bnakch'ut'yan azgayin kazmy, lezunerin tirapetely yev kronakan davanank'y*]. Yerevan: 2022 Preliminary results of the RA census, https://armstat.am/am/?nid=81&id=2623. (21.01. 2024) (In Armenian)
12. The components of the change in the permanent population of RA in 1990-2018. [*HH mshtakan bnakch'ut'yan t'vak'anaki p'vop'vokhut'yan baghadrich'nery 1990-2018t't'*] Materials of the RA AMC. https://armstat.am/file/article/demog_2020_2.pdf. (27.01. 2024) (In Armenian)

13. The development strategy of the healthcare system of the Republic of Armenia for 2023-2026. [*Hayastani Hanrapetut'yan arroghjapahut'yan hamakargi 2023-2026 t'vakanneri zargats'man rrazmavarut'yuny*] https://www.e-draft.am › files › project_doc. (12.02.2024). (In Armenian)

Ընդունվել է / Принята / Received on**: 02. 03. 2024**
Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on**: 30. 03. 2024**
Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub**: 15. 06. 2024**

Տեղեկություններ հեղինակների մասին

Արտաշես Գևորգի ԲՈՅԱՋՅԱՆ՝ պ.գ.թ., դոցենտ ԳԱԱ Շիրակի
հայագիտական կենտրոնի ավագ գիտաշխատող, Գյումրի, ՀՀ
էլ. հասցե՝ a.boyajyan@mail.ru https://orcid.org/0009-0002-8424-4522

Artashes Gevorg BOYAJYAN: PhD in History, Associate Professor,
Senior Researcher of the Shirak Center of Armenological Studies NAS, Gyumri, RA,
e-mail: a.boyajyan@mail.ru https://orcid.org/0009-0002-8424-4522

Арташес Геворгович БОЯДЖЯН: к. ист. наук, доцент, ст. научный сотрудник
Ширакского центра арменоведческих исследований НАН, Гюмри, РА
эл. адрес: a.boyajyan@mail.ru https://orcid.org/0009-0002-8424-4522

Գայանե Ռոյլեսի ԱՎԵՏԻՍՅԱՆ՝ Շիրակի պետհամալսարան,
որակի ապահովման բաժնի պետ, Գյումրի, ՀՀ,
էլ. հասցե՝ gayane.avetisyan.5@mail.ru https: orcid.org0009-0005-0522-979X

Gayane Royles AVETISYAN: Shirak State University,
Head of Quality Assurance Department, Gyumri, RA,
e-mail: gayane.avetisyan.5@mail.ru orcid.org/0009-0005-0522-979X

Гаяне Ройлсовна АВЕТИСЯН: Ширакский госуниверситет,
руководитель отдела обеспечения качества, Гюмри, РА
Эл.адрес: gayane.avetisyan.5@mail.ru orcid.org/0009-0005-0522-979X